ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻՒ 1—3 ՅՈՒՆՈՒԱՐ—ՄԱՐՏ ԿԶ. ՏԱՐԻ 1952

ՏԻՄՈԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ԻՐ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱԾՈՑ ԳՐՈՑ

(ԺԸ. ԴԱՐ)

Անունով միայն ծանօթ էր մեզի Տիմոթէոս, որ կը ներկայացուէր «լուսաւոր վարդապետ» յորջորջումով, հեղինակ «Արարածոց Մեկնութեան» մը: Կը յիշէ զինքը Վարդան Վ. Արեւելցի իր Հնգամատեանին խմբագիր Մեկնութեան Նախաբանին մէջ. «Սկսաք առաջնորդ ունելով զամոլսն հաւատոյ՝ զեղիշէ եւ զԵփրեմ եւ զՄեծն Ոսկերերան եւ զայլսն, որք վաստակէին ի գիրս յայս ի տեղիս տեղիս. եւ յորոց հաւաքեալ էր լուսաւոր վարդապետն Տիմոթէոս» (հմմտ. Հ. Գ. Զարբանելեան, Պատմ. հայկ. հին դպրութեան, Դ. տպ., էջ 789): Անոր ժամանակը Զարբանելեան նախ կը նշանակէր. «Ժ. դարուս մէջ է նաեւ Տիմոթէոս անունով վարդապետ մի՝ որուն կ'ընծայի Արարածոց մեկնութիւն մը» (անդ, էջ 550). իսկ յետոյ, նոյն մատենին «Մանր մատենագիրք» բաժնին մէջ (էջ 793) կը գրէ. «Ազգային յիշատակագիր մ'ալ կ'ըսէ ի ՆԾ. թուականի. «Տիմոթ վարդապետ արար զՄեկնութիւն Արարածոցն»: Այդ «յիշատակագիր»ի մասին աւելի մանրամասնութիւն չէ հաղորդուած. բայց այն ըլլալու է Մխիթար Այրիվանեցւոյ Ժամանակագրութիւնը, ուր յամսն 1001—1010 արձանագրուած է. «Տիմոթ(էոս) վարդապետն արար զՄեկնութիւն Արարածոց» (էջ 72, Պատկանեան):

Մ. Այրիվանեցւոյ այս ցուցմունքը թոյլ կու տայ ինձ նոյնացնելու այս Տիմոթէոսը համանուն վարդապետին հետ, զոր կը յիշէ Մատթէոս Ուրհայեցի յամն 1060 ի թիւս այն «լուսաւոր» վարդապետներու, որոնք ժամանակակից էին Դաւիթ Բ. թագաւորին. «Տիրան Կապանեցին... Անանէ Հաղբատացին... Տիմոթէոս, Յովհաննէս որ անուանեցաւ Կոգեան, Պաւղոս (Տարօնեցի)» եւ այլն (Վարդարշապատ 1898, էջ 179):

Տիմոթէոս վարդապետի այս Արարածոց Մեկնութիւնը տակաւին չէ յայտնուած որ եւ է ձեռագրի մէջ, ինչպէս նաեւ ցայսօր կորսուած կը համարուին իր նախորդներուն՝ Ստեփանոս Սիւնեցւոյ եւ Եղիշէ Կողբացւոյ նոյն մատենին Մեկնութիւնները:

1939/40ին, երբ աշքէ կ'անցնէի Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մատենադարանի ձեռագիրներու Յուցակը, զոր կազմած էր Տ. Սաւալանեանց, ուշադրութիւնս գրաւեց Թ. 373 ձեռագրին ԽԲ. հատուածը, որ խորագիր կը կրէր «Յառաջարան Արարածոց Մեկնութեան Տիմոթէի լուսաւոր վարդապետի»: Պարագաները չէին ներած, որ անձամբ քննութեան առնէի ձեռագիրը: 1941ին խնդրած էի Սիւրմէեան Արտաւազդ Սրբազանէն, երբ ան Երուսաղէմ կը գտնուէր, որ հաճէր օրինակութիւն մը հոգալ ինձ համար այդ ԽԲ. հատուածէն: Սրբազանը բարի գտնուած էր անձամբ օրինակել զայն 19 մայիս 1941: Օգտուելով առիթէս ցուցակագրած է նաեւ ձեռագիրը, որ ապա լոյս տեսաւ Երուսաղէմի ձեռագրաց իր Յուցակին մէջ (Վենետիկ 1948, էջ 310—314, դժբախտաբար առանց մատնանիշ ընելու ձեռագրին Ա—ԾԷ ճառերու իջահամարները):

Ձեռագիրը գրուած է Գրիգոր արեղայէ 1348ին Ղրիմի Ս. Յովհաննէս վանքին մէջ. եւ է բովանդակութեամբ «Տօնապատճառք, զոր արարեալ է Վարդան վարդապետի»: Այս Վարդան առանց տարակուսի համանուն Արեւելցի կոչուած վարդապետն է, հեղինակը Հնգամատեանին Մեկնութեան եւ Պատմութեան. վասն զի Տօնապատճառիս բովանդակութիւնը ունի իր մէջ ԺԳ. դարէն ճառս. ԼԹ. «Վանական վարդապետի խոստովանութիւն հաւատոյ»: Վանական վախճանած է 1251ին:

Վարդան, որ նպատակ ունեցած է «Տօնապատճառ» մը կազմել, առած է անոր մէջ այլ եւ այլ քաղուածքներ, որքան անոնք կը պատշաճէին իր նպատակին: Այսպէս նաեւ ԽԲ. հատուածը, կը ներկայանայ հոն քա-

© National Library of Armenia

ղուածք մը Տիմոթէոսի Մեկնութենէն, այսպիսի խորագրի տակ. «Յառաջաբանութիւն. Արարածոց Մեկնութիւն Տիմոթէի լուսաւոր վարդապետի» (էջ 312), որ նոյն կը հնչէ Վարդանի Արարածոց խմբագիր Մեկնութեան մէջ յիշուած տեղիքին հետ՝ «լուսաւոր վարդապետն Տիմոթէոս»:

Վարդան «Յառաջաբանութիւն» կոչած է իր յառաջբերութիւնը, վասն զի Տօնապատճառին մէջ զետեղած է Արարածոց Մեկնութեան Նախաբանն եւ սկզբնաւորութենէն մաս մը միայն, այն է Արարչութեան առաջին օրուան Մեկնութիւնը (Ծննդոց գրքի Ա. 1—6 համարները): Անշուշտ Մեկնութեան ամբողջութիւնն ունէր Վարդան իր ձեռքի տակ: Դժբախտաբար առ այս չունիմ հաստատուն կռուան: Թէպէտ սա օգտուած է Տիմոթէոսի Մեկնութենէն իր խմբագիր Մեկնութեան մէջ, ինչպէս պիտի տեսնենք յետոյ, բայց չէ յիշած զայն յանուանէ իր Մեկնութեան լուսանցքներու վրայ, ուր սովոր էր նշանակել աղբիւրները համառօտագրութեամբ, ինչպէս Եղիշէ, Եփրեմ, Բարսեղ եւ այլն. ան բաւականացած է Տիմոթէոսէն քաղուածքները, իբրեւ երկրորդական աղբիւր, անանուն, այսինքն «այլ» անորոշով մատնանշել: Թէ բոլոր «այլ»երը Տիմոթէո՞սը կ՚ակնարկեն, չեմ կրնար ապացուցանել:

Պէտք է սակայն շնորհակալ ըլլալ Վարդան վարդապետի, որ իբր 900 տարի յառաջ ծաղկած հայ Մեկնիչ Տիմոթէոսի այժմ մեզի համար կորսուած Արարածոց Մեկնութենէն գոնէ չափաւոր ընդարձակութեամբ հատուած մը պահպանած է իր Տօնապատճառին մէջ:

Այս Հատուածը կը հրատարակեմ ստորեւ ամբողջութեամբ իբրեւ ճաշակ ԺԱ. դարու առաջին կէսին ծաղկած հայ Մեկնիչին ոճին եւ մեկնողական արուեստին:

Ձեռագրին մէջ Հատուածիս կցուած է Յաւելուած մը, որ հաւանօրէն Վարդանի գրչէն է: Այս տեղ կը խօսուի.

ա. «Թէ ընդէ՞ր Մովսէս ոչ յիշէ զանուն իւր ի վերագիր գրոցս: — Պարտ եւ պատշաճ է իմանալ վասն տառիցս այսոցիկ, թէ է՞ր աղագաւ ոչ յիշատակեաց Մովսէս զանուն իւր ի սմա, յորժամ կամեցաւ բացայայտել զգիրս հինգ, զոր գրեաց վասն արարածոց լինելութեան. վասն զի ամենայն ուստեք ի վերագրէ անտի ճանաչի, թէ վասն որո՞յ կամ ո՞յր են ասացեալք...:

բ. «Յառաջ քան զջրհեղեղն ոչ էր կռապաշտութիւն...»: Այս մասերը քաղուածաբար կը գտնուին Վարդանի Մեկնութեան մէջ (Վիեննա, Թ. 229, Թղ. 8բ, 9ա, 8ա եւ այլն): Լուսանցքի վրայ նշանակուած «Այս յաւելուած է»՝ հաւանօրէն այս Յաւելուածին կը հայի:

Մեկնողական գրականութիւնը, որ Դ. եւ Ե. դարերուն մեծ թափով եւ բեղմնաւոր արդիւնքով մշակուած էր յոյն եւ ասորի Հայրերէ, սկսեալ Է. յատկապէս Ը. դարէ կորսնցուցած էր իր թափն եւ արժէքը: Նոր Մեկնիչները, որոնք անհմուտ եբրայեցերէնի, միայն Եօթանասնից Թարգմանութիւնն իրենց բնագիր ունէին, պարզապէս հետեւող հանդիսացան Ս. Հայրերու Մեկնութիւններու, եւ ջանք տարին անոնց տեսութիւնները կամ իւրացնելու եւ կամ զանոնք շղթայօրէն առընթերադրելու, ուրիշ խօսքով կազմելու խմբագիր Մեկնութիւններ Ս. Գրոց այլ եւ այլ գիրքերու: Այս խմբագիր Մեկնութիւնները կ՚ըլլային առ հասարակ խառնուրդ մը բառական եւ այլաբանական տեսութեանց: Ինքնակացութիւն գուն ուրեք երեւան կը բերէին: Անոնց շաւիղով ընթացան ԺԱ.—ԺԴ. դարերուն նաեւ հայ Մեկնիչները Հայաստան: Խմբագիր Մեկնութիւնները յաճախեցան, երբ Թարգմանաբար Հայոց ծանօթացան Ղեւտացւոց Գրքին եւ Կաթողիկեայ Թղթերու խմբագիր Մեկնութիւնները: Անանիա Հաղբատացի, Սարգիս Կունդ, Վարդան Արեւելցի, Գէորգ Լամբրոնացի այս ուղղութեան հետեւեցան: Ուրիշներ մնացին պարզապէս հետեւողներ սուրբ Հարց տեսութեանց, իւրացնելով զանոնք, յաճախ բառական փոխառութեամբ առանց աղբիւրը մատնանշելու: Ասոնց թուին մէջ է Տիմոթէոս վարդապետ: Ինքնակաց էին Գրիգոր Նարեկացի, Իգնատիոս, Սարգիս Շնորհալի, Բարսեղ Մաշկեւորցի, որոնք Նոր Կտակարանը նկատի ունէին, նոյնպէս Հին Կտակարանի Մեկնիչները Մխիթար Գոշ, առաւել չափով Ներսէս Լամբրոնացի իր բոլոր Մեկնութիւններու մէջ: Ամէնն ալ, սակայն, իրենց աղբիւր ունէին Ս. Հայրերու գրուածքներու հայերէն թարգմանութիւնը, որովհետեւ թէ յոյն եւ թէ ասորի, ինչպէս նաեւ լատին լեզուները եւ այդ լեզուներով գրուած մատենագրութիւնը անմատչելի էին իրենց, բացառութիւն կազմելով Ներսէս Լամբրոնացի: Հայ Մեկնիչները Ս. Գրքի միայն հայերէն

1766-21

թարգմանութիւնը աչքի առաջ ունէին: Ասորի թարգմանութենէն հատուածներ կ՚ընծայէր իրենց Ս. Եփրեմ: Իսկ Եօթանասնից յունարէն այլ եւ այլ թարգմանութիւններու ընթերցուածները, նոյնպէս եբրայական բնագրէն տեղիքներ կա՛մ հայերէն թարգմանութեան ստեղծանիչ լուսանցագրութիւններէն ծանօթ էին իրենց եւ կամ Ս. Հարց Մեկնութիւններէն: Այդ Լուսանցագրութիւնք, որոնք անոնց տակաւին ԺԳ. դարուն մատչելի եղած կ՚երեւան, դժբախտաբար յաջորդ շրջանի Աստուածաշունչներէն կամ դուրս փարուած են եւ կամ բնագրին մէջ մուծուած:

ԺԱ. դարուն, երբ կը գրէր Տիմոթէոս իր Մեկնութիւնը, հայ գրականութեան մէջ գոյութիւն ունէին ինքնագիր երկու Արարածոց Մեկնութիւններ, Եղիշէ Կողբացւոյ (Ե. դարու առաջին կէսին) եւ Ստեփանոս Սիւնեցւոյ. երկուքն ալ տակաւին չեն յայտնուած: Իսկ թարգմանաբար մատչելի էին Եփրեմ Ասորւոյ, Բարսեղ Կեսարացւոյ, Յովհ. Ոսկեբերանի, Կիւրեղ Աղեքսանդրացւոյ (ամէնն ալ Ե. դարէն), Փիլոն Եբրայեցւոյ (Զ. դարու Բ. կէսէն), Պիտիղէսի (Ը. դարէ), Եպիփան Կիպրացւոյ (Թ. դարէ՞) մեկնողական գրութիւնք եւ ճառք:

Տիմոթէոս Վարդապետ աչքի առաջ ունեցած է այս գրութիւններէն, գոնէ մեզի հասած Հատուածին մէջ, Եփրեմի Արարածոց Մեկնութիւնը, Բարսղի Վեցօրեայքը, Փիլոնի Լուծմունքը: Ան կարդացած է Գրիգոր Նազիանզացւոյ ճառերը, անշուշտ նաեւ այլ Ս. Հարց գործեր՝ Կիւրեղ Երուսաղեմացւոյ Կոչումն Ընծայութեան, Նեմեսիոս եւ այլն:

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԱԾՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏԻՄՈԹԷԻ ԼՈՒՍԱՒՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ

1. Ի սկիզբն լինելութեան գոյացութեանց արարածոց նախ եւ առաջին հաւատք ի մեզ հաստատեսցի յարարիչն Աստուած, թէ գոյակ է իսկական, անսկիզբն եւ անբաւ ի բովանդակութեանց: Հայր բարեգործակ եւ բնաւից արարչագործ, գերագոյակ գոլով գոյից, վասն իսկապէս եւ ի հարկէ գոյականութեան յանսահման եւ անպարագրող տեսանէ. եւ սահմանիչ զոր բովանդակէ: Իսկ ինքն միայն սահմանեալ[1] յՈրդւոյ հայրականն յատկութեամբ եւ ի Հոգւոյ բխողաբար առանձնութեամբ, իսկ միսումն յառաջառաքող հոգեպէս. որպէս զի երիցն թուոց[2] պահեսցի ի մեզ առանձնութիւն եւ միոյ աստուածութեան առանձնութիւն: Եւ զայսպիսի ձայնս հաւատով ծանիցուք. որպէս զի պատեհաբար յարմարեսցին իմաստքն եւ մի՛ զարտուղի ելցուք ի ճշմարիտ իմանալեացն[3]:

2. Իսկ զի՞նչ են հաւատքն: Ըստ ինքեան իրք են առանց շօշափելոյ, անըմբռնելի, անտեսանելի, անքննելի, անճառելի, լռութեամբ պատուեալ եւ մտօք միայն երկրպագեալ[4]: Քանզի հաւատ ի Հայրէ սկսանի եւ յՈրդի հասանի եւ ի սուրբ Հոգին վերաբերի: Հաւատոյ արմատ կենդանութեան՝ Հայր, եւ սա անթառամելի ի նմին արմատոյ Որդի. իսկ պտուղ անմահութեան՝ դարձեալ եւս ի նմանէ՝ Հոգին սուրբ: Երրորդութիւն պարզ եւ առանց շարադրութեան:

3. Անորիչ ըստ միական բնութեան. այսինքն աստուածութիւն, տէրութիւն, զաւրութիւն եւ (խորք) գործոյ արարչութեան, յաւիտեան կատարեալ յառանձնութեան, եւ միացեալ ըստ հաւասարութեան, որ նախ քան զյաւիտեանս եւ երիցագոյն քան զժամանակս եւ մնայ իսկ ի նոյնութեան անծերանալի, անարատ եւ անմահ: Ոչ աճէ, քանզի աննուազ է, եւ ոչ լնու, քանզի անթերի է: Երրորդութիւն համազօր, ոչ այժմ եւեթ գտեալ երկրպագութիւն[5], այլ յաւիտենից յերկինս ի հրեշտակաց երկրպագեալ եւ ի հարց սրբոց ի վերայ երկրի փառաւորեալ, ի մարգարէիցն պատուեալ եւ յառաքելոցն քարոզեալ եւ յեկեղեցիս արդարոց մեծացեալ:

4. Վասն որոյ երիս առաքինութիւնս Պաւղոս եկեղեցւոյ աւանդէ. զհաւատ, զյոյս, զսէր. հաւատ ի Հայր, յարմատն եւ ի պատճառ. եւ յոյս յՈրդի, «Քանզի յուսամ եթէ տակաւին փրկեսցէ զմեզ[6]». իսկ սէր ի Հոգին սուրբ, քանզի պտուղ Հոգւոյն սէր է[7]: Այսոքիկ առաքինութեան հաւատք: Իսկ յաղագս ամենասուրբ Երրորդութեան վկայեսցեն եւ աստուածաշունչ պատգամքն. որպէս գլխոց գործն մի է յաւիտեան իրաւք բնութեան նոյնութիւն դաւանելի է. քանզի արար զերկինս Հայր, այլ ոչ առանց Որդւոյ եւ Հոգւոյ,

[1] սահմանիլ:

[2] թուոյ:
[3] իմանալո՛յն:
[4] երկրպագել:
[5] յերկրպագութիւն:
[6] Բ. Կոր. Ա. 11:
[7] Հմմտ. Գաղատ. Ե. 22:

© National Library of Armenia

որպէս գրեալ է. «Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր եւ բանիւ Տեառն երկինք հաստատեցան եւ հոգւով բերանոյ յաւիտեան զաւրութիւնք նոցա[8]»: Զաշխարհս յաւիտեան ելից Հայր, այլ ոչ առանց Որդւոյ՝ ըստ գրեցելումն. «Զերկինս եւ զերկիր ես լնում ասէ Տէր[9]»: Ելից եւ որդի. «Զի ամենայն ինչ նովաւ եղեւ[10]»: Իսկ յաղագս Հոգւոյն գրեալ է. «Հոգի Տեառն ելից զտիեզերս[11]»:

5. Իսկ զլուխ զգալի արարածոց մարդն ոչ միայն ի Հաւրէ ստեղծանի, այլ եւ յՈրդւոյ եւ ի Հոգւոյն. եւ վկայեաց ինքն. «Արասցուք մարդ ըստ պատկերի մերում[12]». «արասցուք»ն զուգապատիւ ցուցանէ զկարգն, զի հաւասարակ են կամքն եւ գործքն. Դաւիթ վկայէ. «Ձեռք քո արարին եւ ստեղծին զիս[13]»: Որպէս եւ վասն երկնայնոցն զաւրաց Յովբէ ասէ. «Որոյ ձեռք արարին զզաւրս երկնից[14]»: Իսկ «ըստ պատկերին» ասելն զմիակամութիւն բացայայտէ. վասն որոյ եւ ի վերստին մեր նորոգման նովին կոչմամբ կերպարանիմք. ո՛չ յանուն Հաւր միայն եթէ ոչ յանուն Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն. «Գնացէք, ասէ, մկրտեցէք զնոսա յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ»[15]: Պաւղոս ասէ. «Որ ներգործեաց զայս ի մեզ Աստուած է, որ եւ ած զմեզ եւ կնքեաց[16]». կնիք է եւ Հոգին սուրբ. «Մի տրտմեցուցանէք զՀոգին սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան[17]». որով կերպարանակից արար զմեզ Որդւոյն Աստուծոյ եւ պատկերի[18] Աստուծոյ Հաւր[19]: Ըստ որում «ոչ պարտի ծածկել զգլուխն» յաղաւթականութեան, «զի պատկեր եւ փառք Աստուծոյ են[20]»:

6. Մեծ է Հայր, մեծ է Որդի, անբովանդակելի է Հոգին սուրբ ըստ հոգէնուագին որ ասէ. «Մեծ է Տէր մեր եւ մեծ է զաւրութիւն նորա[21]»: «Քրիստոս Աստուծոյ զաւրութիւն[22]». եւ «Իմաստութեան նորա ոչ գոյ

[8] Սաղմ. ԼԲ. 5—6:
[9] Երեմ. ԻԳ. 24:
[10] Յովհ. Ա. 3:
[11] Իմաստ. Ա. 7.
[12] Ծն. Ա. 26:
[13] Սղմ. ՃԺԸ. 73:
[14] Ովս. Ժ. 4:
[15] Մատթ. ԻԸ. 19:
[16] Հմմտ. Բ. Կորն. Ա. 22:
[17] Եփես. Դ. 30:
[18] պատկեր:
[19] Հմմտ. Հռոմ. Ը. 29:
[20] Ա. Կորն. ԺԱ. 7:
[21] Սաղմ. ՃԽԶ. 5:
[22] Ա. Կորն. Ա. 24:

թիւ[23]». այսինքն Հոգւոյն սրբոյ: Խաղաղութիւն է Հայր. յոր դէմս ասէ. «Իբրեւ զգետ զխաղաղութիւնս իմ[24]»: Խաղաղութիւն է Որդի ըստ Պաւղոսի, թէ «Նա է խաղաղութիւն մեր[25]». եւ արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ: Խաղաղութիւն է եւ Հոգին սուրբ. «Պտուղ Հոգւոյն սէր, խնդութիւն, խաղաղութիւն[26]»: Աղբիւր է Հայր, «Զի ի նմանէ է աղբիւր կենաց[27]»: Աղբիւր եւ Որդի, որ ասաց մարգարէին. «Զիս թողին զաղբիւրս ջրոյ կենդանւոյ[28]»: Աղբիւր է եւ Հոգին. «Քանզի մեք ամենեքեան զնոյն Հոգի արբաք[29]»: Լոյս է Հայր, վասն զի «Աստուած լոյս[30]» ասի: Լոյս է եւ Որդի, վասն զի «Ես եմ լոյս աշխարհի[31]»: Լոյս է եւ Հոգին սուրբ. ասէ Պաւղոս. «ԶՀոգին մի շիջուցանէք[32]»: Եւ բազում այսպիսի վկայութիւնս[33] գտանեմք տարածեալս ի տառս աստուածաշունչս Հին եւ Նոր Կտակարանաց:

7. Յաղագս համագոյական եւ նոյնագործարար արարչութեան եւ զուգապատիւ Երրորդութեան՝ այնմիկ որոյ կամացն ակնարկութիւն յօժամ եւ կամեցաւ սկիզբն գոյացութեան արար, որպէս եւ բազում աւրինակք[34] սկզբանց տարացոյց գտանին ի մեզ, աւրինակք եւ աւրէնսդրութիւն. աւրինակք որպէս հիմն արկանել տան. եւ ողնափայտ սկիզբն նաւի կազմութեան. եւ կամ որպէս վկայութեան[35] խորանին արարուածք ի սկսմանէ ումեքէ կատարել[36]»: Իսկ աւրէնսդրութիւնք, որպէս. «Սկիզբն ճանապարհին կենաց արդարութիւն է[38]». եւ Սկիզբն իմաստութեան երկեւղ Տեառն[37]». եւ այլք սոյնին համազաւրք[39]: Իսկ այսմ

[23] Սաղմ. ՃԽԶ. 5:
[24] Ես. ԿԶ. 12:
[25] Եփես. Բ. 14:
[26] Գաղատ. Ե. 12:
[27] Սաղմ. ԼԵ. 10:
[28] Երեմ. ԺԷ. 13:
[29] Ա. Կորն. ԺԲ. 14:
[30] Ա. Յովհ. Ա. 5:
[31] Յովհ. Ը. 12:
[32] Ա. Թեսաղ. Ե. 19:
[33] այսպիսիս վկայութիւն:
[34] օրինակ:
[35] վկայութիւն:
[36] կատ իւր:
[37] Հմմտ. Առակք. ԺԶ. 5. «Սկիզբն ճանապարհի բարւոյ՝ գործելն զարդարութիւն»:
[38] Առակք, Ա. 7:
[39] Հմմտ. Բարսեղ, Վեցօրեայք, 10. «Ասի դարձեալ սկիզբն սկսուածի իրաց ինչ, որ առնուցուն սկիզբն լինել. որպէս ասիցէ ոք, թէ սկիզբն բարւոք ճանապարհին արդարութիւն, որ հասուցանէ ի հանգիստ երանելեաց աշխարհին: Ասի սկիզբն եւ այնմ, զոր ինչ խորհեցիմք մեք գործել. կամ արկանել հիմն տան, կամ հարկանել բուռն զգործոյ տախտակամած յատա-

սկսման Մովսէս է պատմիչ, այն որ կենդանւոյն զԱստուած տեսանել արժանացաւ. որում ոչ տեսլեամբ երազոց, այլ դէմ յանդիման խաւսեցաւ: Վասն որոյ եւ ի պատգամաց բանիցն, զոր ընկալաւ յԱստուծոյ, խաւսեցաւ ընդ մեզ. եւ ասէ.

8. «Ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր»: Նախ զսկիզբն ցուցանէ եղելոցս, զի մի կարծեսցուք թէ անսկիզբն է[40]. եւ ապա զայն, թէ Աստուած է արարիչ սոցա եւ չեն ինքնակայք ըստ կարծեաց իմաստնոցն Յունաց[41]: «Ի սկզբանէ արար Աստուած». զոր աւրինակ ճարտար ոք ի պատրաստել զտեղի շինուածին երկուս անկիւնավէմս դնիցէ, այսպէս արարիչն զերկինս եւ զերկիր[42]: Եւ զոր աւրինակ ոչ սկիզբն տանն տունն է, եւ ոչ սկիզբն ժամանակին ժամանակն. եւ ոչ մասն մի փոքրիկ է ժամու, յորում արկաւ հիմն յեղանակացս[43]: Ոմանք աւրինա(կա)գիրք այսպէս գրեն. «Սկիզբն[44], ասեն, արար Աստուած զերկիր». եւ այլք թէ «ի սկսմանէ[45] արար Աստուած զերկինս». եւ այսինքն է՝ յակա՛ն թաւթափելն միայն[46]: Կամ թէ այսպէս իմասցուք զբանս. «իսկ»՝ Հայր, «բան»՝ Որդի, «է»՝ ամենասուրբ Հոգին[47]:

9. «Աստուած արար զերկինս եւ զերկիր»: «Ի սկզբանէ արար Աստուած». ոչ թէ այս չափուն էր զաւրութիւն առնել: Զի եթէ

կայ նաւի, որ է սկիզբն սկսուածոյ կազմութեան նաւին. կամ որպէս գրեալն է. Սկիզբն իմաստութեան է երկիւղ տեառն...: Ասի դարձեալ սկիզբն եւ այլոց արուեստից ճարտարութեանն ըստ իմաստութեանն Բեսելիէլի, որ եղեւ զարդ խորանին վկայութեան եւ կազմածի (տպ. կազմած ի) վրանի ժամուն»: — Ասկէ քաղուածարար Վարդան (Թղ. 9ա—ր):
[40] Հմմտ. Բարսեղ, 5. «Նախ սկիզբն եղաւ լինելոյ արարածոցն. զի մի կարծիցէ ոք, եթէ առանց սկզբան իցէ աշխարհս»:
[41] Վարդան, 9ա. «Նախ սկիզբն ուսուցանէ զոլ եղելոցն, զի մի կարծեսցուք թէ անսկիզբն իցեն. եւ ապա զայն թէ Աստուած է արարիչ եւ չեն ինքնակայք ըստ կարծեացն Յունաց»:
[42] Վարդան, 9ա. «Զոր օրինակ շինողք յընդարձակ բակի յերկուս եզերսն դնեն եւ անկիւնավէմս կառուցանեն, եւ ապա զմիջոցն լնուն շինուածով, նոյն օրինակ արարիչն զերկին ի վեր եւ զերկիր ի խոնարհ կառուցանէ»:
[43] Հմմտ. Բարսեղ, 12, տ. 1—4:
[44] Թերեւս՝ «ի սկզբան»:
[45] ի սկսման:
[46] Բարսեղ, 11, տ. 15—19. «Բայց այլ օրինակա[ւ] գիրք եւս մեծապէս (ա՞յսպէս) աւանդեցին մեզ ի մեկնել զմիտս բանին Աստուծոյ. ի սկզբանէ (ի սկսմանէ՞), ասեն, արար Աստուած զերկինս եւ զերկիր. այս ինքն յանկարծակի, յական թօթափել, ի միում սակաւ ինչ վայրկենի»: Հմմտ. Եփրեմ, Ա. 1:
[47] Այս բառախաղը «իսկ — զբան — է» առաջին անգամ կը տեսնուի Ստեփանոս Սիւնեցւոյ Յովհաննու Մեկնութեան սկիզբը. ուրկէ փոխ առած են նաեւ ուրիշներ:

բրուտն իւրով աղքատիմաց ճարտարութեամբն յառնելն անաւթս բազումս ոչ սպառէ զարուեստն. քանի՞ ինչ զմտաւ ածցուք յաղագս անբաւազաւրին Աստուծոյ. թէ այլ եւս բիւր այսքան կարող էր միայն ակնարկելով յանդիման կացուցանել, թէ պէտք էին[48]:

10. «Ի սկզբանէ արար Աստուած». երիցացոյց[49] պատմութեամբն զերկինս. ե՛ղ առ նմին զերկիր առ ի պատիւ բնութեան երկնի: Եւ այն զի՞նչ իցէ, զի Դաւիթ մարգարէն նախաղասէ. «Դու, Տէր, ի սկզբանէ զերկիր հաստատեցեր եւ գործք ձեռաց քոց երկինք են[50]»: Երկինք երկուս են. նա զառաջինն ասէ, զհրեղէնն. եւ սա զհաստատութիւնն, զի յետ երկնի եղեւ[51]: Զերկին կատարեալ կազմեաց, զի ընդ նմա եղեն բնակիչք նորա հրեշտակաց էութիւնքն: Զի ի կատարմանէն երկնից զմտաւ ածցուք զանբաւ զաւրութիւն Աստուծոյ: Իսկ զերկիր առ սակաւ սակաւ ած ի կատարումն վասն մեր աւգտի, զի ուսանել մարթասցուք եւ մի ամբոխեսցուք. զի գիտասցուք զխնամս դայեկութեան առ մեզ: Զկերպարանս երկնից մեծն Եսայի ասէ. «Խորանարդ զմրեթաձեւ[52]». ի ժամանակին յորում տայր փառս արարչին: «Զերկին», զի թեթեւ բնութիւն է եւ պարզ եւ ոչ ի թանձրուց տարերց ատի, զվերին վայրն ետ նմա: «Եւ զերկիր», զի թանձր է եւ վայրաբեր, զներքին վայրս վիճակեցոյց նմա. զի տեղի կենդանեաց եւ նոցայն պիտոյից[53] եւ տեղի խրատու եւ հանճարոյ: Եւ յաւիտեան թեթեւ վերանայ աստուստ, եթէ գտանի առ մեզ. եւ ամենայն ծանր որ գտանի առ վերին վայրն, աստ առ մեզ իջանէ[54]:

11. «Ի սկզբանէ արար Աստուած զամենայն»: Ոչ գոյր այլ բարբառ վեհագոյն քան զայս՝ ցուցանել զլինելոցս քան զոր բարձր բարբառիւ (՞) ասէ. «ի սկզբանէ»: Նոյն արարիչ ի Կարմիր Ծովուն զայսոսիկ զբարձրաղէզ

[48] Բարսեղ, 5, տ. 13—21: — Վարդան, 10ա հետեւելով Տիմոթէի:
[49] Զ. երեցացոյց:
[50] Սաղմ. ՃԱ. 26:
[51] Վարդան, 10ա, փոխառութեամբ:
[52] Եսայի չունի այսպիսի տեղիք: Հմմտ. Բարսեղ. «Եւ զկերպարանս եւս երկնից կամեցաւ ուսուցանել մեզ ինքն իսկ նոյն Եսայի՝ ի ժամանակի իբրեւ տայր փառս արարչին զարմանալով. եւ ասէր, թէ Ո ձգեաց զերկինս իբրեւ զկոնք զմրեթարդ եւ հաստատեաց կանգնեաց զնա իբրեւ զխորան ի բնակութիւն»:
[53] Զ. զպիտոյից:
[54] Բարսեղ, 15, տ. 24—25. 16, տ. 23. 14, տ. 34—36:

© National Library of Armenia

կոյտս ջրոյն երբեւ զերկրին եւ զնոր երեւել զատակ ծովուն երկիր ցամաք[55]։

12· «Ի սկզբանէ»· որ էրն ի սկզբանէ[56] միածին Որդին[57] արար ի վերայ երկրի զեկեղեցի բնակութիւն ինքեան եւ երկիր կենդանեաց եւ սրբութիւնք սրբոց։ «Ի սկզբանէ արար Աստուած զերկին»· զհոգին բանական եւ երկնային, «եւ երկիր», զհողեղէն մարմինս, զի մի անբաժ իցէ հողս այս ի լաւ բնութենէ անտի։

13· «Ի սկզբանէ արար Աստուած» երկին շրջագայ եւ երկիր հաստատուն. երկին՝ անփոփոխ բնութիւն եւ երկիր՝ յեղափոխուկ։ Արդ զի մի՛ երկին վասն անփոփոխ բնութեան աստուած կարծիցի, եդ ի նմա շարժականութիւն, [զի շարժականութիւն], զի շարժականն աստուած ոչ է։ Եւ զերկիր յեղլի, զի մի՛ վասն կայականութեան աստուած թուեսցի, վասն զի փոփոխի երեսաւք։ Եւ արդ է յաւիտեան ինչ շարժման եւ կայանի ծնունդ արարածական, իսկ արարիչ հաստատութեան է անփոփոխ։

14· «Եւ երկիր էր աներեւոյթ եւ անպատրաստ»· «Թոհ եւ բոհ» ասէ Ասորին[58]. այսինքն խոր եւ խաւար։ Զայս զի ասաց, ի բազում իրաց լռեաց. ի հրոյ, ի յաւդոյ, ի ջրոյ. այլ յայտ է զի եւ սոքա ընդ երկնի եւ ընդ երկրի եղեն. նախ երկիր եղեւ եւ ապա ջուրն եւ ծածկեաց զնա։ Եւ զի ոչ ասաց՝ «արար զջուրն», այլ ասաց «աներեւոյթ էր», զի մեք յանձն առցուք զպատճառն։ Զի թէ աւդով ծածկէր, աւդ լրթալոյս բնութեամբ եւ մաւտաւորացն դէմք երեւին միմեանց աւդով[59]։ Եւ աւել թէ հրով ծածկէր, ուր երեւի հուր՝ լոյս ծագէ։ Արդ բայց ի հրոյ, յաւդոյ եւ ի հողոյ այլ ոչ ինչ գոյր, բայց ջուր. զի յայտ է եթէ ջրով ծածկեալ էր զնայն։ Այլ ջուր յորժամ յատակ լինի, երեւին ի նմա վէմք եւ ձկունք լուսով. բայց անդ լոյս ոչ գոյր. վասն որոյ «աներեւոյթ էր». եւ Յովբ թ ասէ զարձեալ. «Որ արարիչդ ես ջրոյ[60]»։ Իսկ անպատրաստութեան երկրի դարձեալ ջուր էր։ Զի պատրաստութիւն երկրի բոյսն

[55] Վարդան, 10ա, 10բ։
[56] Ա· Յովհ. 1։
[57] Յովհ. Ա· 18։
[58] Լուսանցքի վրայ «Եփրեմ». հմմտ. Եփրեմ, Ա·, էջ 2—3։ Վարդան, 8ա «զոր Թոհ եւ բոհ ասացին, այս ինքն խոր եւ խաւար»։ Տես եւ Բարսեղ, 28, տ· 24—27։
[59] Բարսեղ, 29, տ· 3· «Զի օդոյ անօսր եւ լրթապոյն բնութիւն է... զի երեւեսցին ի մօտոյ միմեանց երեսք տեսողացն նուազողոյն լուսով նորա»։
[60] Յովբիթ, Թ· 17։ Բարսեղ, 29, տ· 1—17։

է, որով զարդարի նա, բազմատոհմ բողբոջք անկոց եւ խոտոց. յորժամ լինին դաշտք կանաչագեղք եւ մարգք ծաղկազարդք, լերինք անտառախիտք, բլուրք պրակազեղք, անդք բուսարձակք եւ վիճակք պտղալից, ծառք վարսաւորք եւ տունկք հովանաւորք։ Այս ամենայն զարդ երկրի չեւ եւս էր եղեալ, ի խափանուածէ ջրոյն, մանաւանդ զի չէր առեալ հրաման երկիր բղխել զբոյսս եւ զտունկս[61]։

15· Իսկ խաւարեալ իմաստունքն Յունաց ասեն. «զհիւղէ[62] յայտ առնէ զպատրաստութիւն»։ Իսկ մեք մի զիցուք միտ բարբաջմանց նոցա։ Դարձեալ ասեմք, եթէ չեւ եւս էր եղեալ մարդ տեսող նորա զարդուցն. վասն այնորիկ «աներեւոյթ էր երկիր եւ խաւար ի վերայ անդնդոց»։ Ամբարշտեն դարձեալ զբանս զայս Մանիքեցիքն եւ Ծայդանացիքն եւ խոտեալ աղանդն նոցա. ասեն. «զչարէն յայտ առնէ. իսկ չարն, ասեն, գոյութիւն ունի եւ անձն կենդանի եւ ինքնեղ եւ ոչ յԱստուծոյ. հակառակ է բարւոյ եւ թշնամի կենաց. եթէ Աստուած լոյս է, որ նմա հակառակ է՝ խաւար է»։ Եւ բազում ինչ տաղեն[63] աստուստ։ Եւ մեք մի՛ անկցուք յառասպելս նոցա[64]։

16· Այնպէս ասեմք զխաւարն որպէս եւ էն. վասն զի խաւար է աւդ անլոյս եւ ստուեր տեղեաց ինչ. որպէս իրք են երեւեցուցիչ խաւարի։ Յորժամ լոյս չլինի եւ տարեր իրիք արգելու զլոյսն[65]. եւ վայրք առանց լուսոյ։ Քանզի մեծ շրջանն երկնից արգելեալ փակեաց զամենայն տարերս ընդ ինքեամբ. եւ զամենայն փակելով արտաքուստ երեւեցաւ մեծ ծոյ գործեալ վայրքն, որ առ երկրաւ գտաւ առանց լուսոյ։ Յայտ է, զի աւդ առանց լուսոյ՝ այդ է խաւար[66]։

17· Իսկ «անդունդք» անբաւութիւն ասի։ Զբազմութիւն ջրոյն, որ ի լոյղ ունէր զամենայն երկիր, ալիք զալիս բախելով կոծէին, վերանային՝ կուտակեալք ի միմեանց վերայ՝ բռնանային ունել զտեղի աւդոյդ. զայն կոչէ

[61] Բարսեղ, 29, տ· 18—27։
[62] Զ· զհեղէ։ Բարսեղ, 25, տ· 16 «Այս բանք, ասեն, զհիւղէ յայտ առնեն, որ էր աներեւոյթ եւ անպատրաստ»։
[63] Զ· տաւեն։
[64] Բաղդատեա Բարսեղէն, էջ 30, տ· 1—12։ — Աւկէ Վարդան, 10բ։
[65] Բաղդատեա Բարսեղէն, 29, տ· 35—37· իմացիր· «եւ ստուեր տեղեաց՝ յորոց արգելու լոյս ի պատճառս մարմնոց ինչ որ կայցեն ի դիմաց»։
[66] Հմմտ. Բարսեղ, էջ 34, տ· 18—20։ — Վարդան, 10բ։

անդունդք[67]։ Զի չեւ եւս էր առեալ ջրոյն զփոյթ գնալոյ. վասն զի ոչ եւս ուսեալ էր ի հրամանէ հաստչին գնալ ի տեղին, որ պատրաստեալ էր նմա յարարչէն իւրմէ։ Եւ զի արարած Աստուծոյ է անդունդք՝ Յոբ ասէ. «Որ արար զանդունդս[68]». եւ զհրեշտակաց որ ընդ երկնի եղեն, Դաւիթ ասէ. «Որ արար զհրեշտակս իւր հոգիս[69]». եւ զհրոյ եւ զաւդոյ դարձեալ. «Զփայլատակունս իւր յանձրեւս արար[70]». զի յաւդոյ լինին այսք։

18· Դարձեալ «Երկիր աներեւոյթ եւ անպատրաստ». եկեղեցւոյ խորհուրդն կայր ի կամս Աստուծոյ ծածկեալ այլ չերեւէր. զի Որդին Աստուծոյ մարդեղութեամբ չեւ էր պատրաստեալ զնա. եւ խաւարն անգիտութեան խորոց գրոց, այս է անդունդք խորոց, զոր Առաքեալ անուանէ. «Ո՛ խորք[71]» ասելով։

19· «Եւ հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց»։ Զայս եթէ զհոգւոյ իմասցիս, ընկա՛լ. զի պատմեցաւ քեզ վասն հոգւոյ, զի նա մասն մի է յայնցանէ որ եղեւ ընդ աւդոյ եւ ընդ ջրոյ։ Բայց խնդիր եղեւ ի մէջ առաջնոցն վասն սորա. եւ ասեն, թէ զՀոգին սուրբ պարտ է իմանալ[72]։ Իսկ եթէ զինչ իցէ պատճառք Հոգւոյն երթեւեկի. զի ի կազմութենէ թերի էին, սուրբ Հոգին տայր շարժութիւն ջրոյ եւ աւդոյ եւ կենդանական զաւրութիւն։ Զի որ ի ջուր եւ որ ի ցամաքի, ամենեցուն չունչ՝ կենաց պատճառ բաշխեսցէ. զի ամենեցուն կեանք կախեալ կայր զնմանէ[73]։ Եւ կամ որպէս հաւ թխելով զձուն՝ խլրտումն առնէ ի ներքս, այսպէս եւ Հոգին սուրբ առ զդին զթոյն շրջէր եւ արկանէր կենդանական զաւրութիւն ի ջուրն եւ յերկիրն, որ ներքոյ նորա։ Զի յորժամ հրամայիցէ, (զի) յառաջ ածցեն զբոյսս եւ զլողակ եւ զթռչուն բնութիւն. եւ ժամապահ եղեն մուծանել զմխանձնութիւն Հոգւոյն, զի կատարումն փառաւոր Երրորդութիւն ցուցցի[74]։ Արար Աստուած Հայր զերկին եւ զերկիր. և ատ զՀոգին յիշէ եւ ապա զՈրդի՝ յառնել զլոյսն. նկարէ զջուր աւազանին, որ Հոգւովն սրբի[75]։

[67] Անգ, 52, տ· 11։
[68] Յոբի գրոց մէջ չեմ գտներ տեղիքս։
[69] Սաղմ· ՃԳ· 4։
[70] Սաղմ· ՃԼԴ· 7։
[71] Հռոմ· ԺԱ· 35։
[72] Բարսեղ, էջ 35, տ· 1—32։
[73] Եփրեմ, էջ 3։ Ծարունակութիւնը Բարսեղէն է։
[74] Աւկէ Վարդան, 11ա։
[75] Եփրեմ, էջ 3։

Իսկ այլք ի լեզուաց[76] ասեն թէ «հողմ շրջէր». եւ կէսք եթէ «հատկութա Աստուծոյ շրջէր». եւ յոյն «հողմ» եւ մերս թարգման եթէ «հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրցն[77]»։

20· «Եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս»։ Այս առաջին[78] բան յաղագս լուսոյ ասացեալ. վայել էր իսկ մեծի արարչութեան լուսոյ ի լոյս սկիզբն առնել[79], զմեզ ուսուցանելոյ աղագաւ։ Այնպէս ցուցանէ, եթէ խաւսի Աստուած. այլ չեն պէտք Աստուծոյ. եւ ոչ գոյ նմա ձայնարան գործիք եւ յաւչապատ բանք[80], այլ ակնարկելով գործն կատարէր։ «Եւ ասաց Աստուած. եղիցի լոյս». զկնի եկն բանիցն գործն եւ եղեւ լոյսն ցան եւ ցիր անմարմին եւ անարեգակ[81]։ Զայլոցն զնիւթն յառաջագոյն գոյացուցեալ՝ զտեսակն արար յետոյ. իսկ ատ տեսակն յառաջ. զի տեսակ արեգական է լոյս. զնիւթն, յետոյ արար զամանն[79]։ «Ասաց Աստուած. Եղիցի լոյս». եւ առժամայն խաւարն հալածեցաւ եւ ելից լոյսն զամենայն լայնութիւն եւ զերկայնութիւն երկրի եւ ծովու եւ ամբարձաւ մինչեւ յարփին եւ ի հաստատութիւն. եւ յանկարծահաս եւ վաղահաս ծագմամբն փակել ի ներքս իւր զչորս կողմանս աշխարհիս։ Եւ եղեւ աւդն ուրախարար եւ ջուրն հաճոյ աչաց։ Եւ երեւեցան մասունք երկրի պէսպէս կերպարանաւք։

21· «Եւ ետես Աստուած զլոյսն զի բարի է»։ Զի՞նչ ոք կարէ գովութիւն ասել՝ յորժամ արարիչն վկայէ թէ «բարի է»։ Ո՞չ որպէս մեր գործիք են աչք եւ նովաւ ընտրեմք զհաճոյն տեսանելոյ. զի ոչ այսպէս տեսանէ Աստուած, այլ իւրաբար զհանդիստն եւ զպիտանացուն զիտելով վկայեաց եթէ բարի է։ Բարի եւ գեղեցիկ երեւի մեզ ոսկի. բարի եւ

[76] Զ· զլեզուայ։
[77] Ինձ անծանօթ է, թէ ինչ աղբիւրէ օգտուած է հոս Տիմոթէոս։ Այս տեղիքը ունի նաեւ Վարդան այլ խմբագրութեամբ (11ա [1])։
[78] Զ· առաջին։ Հմմտ. Բարսեղ, էջ 35, տ· 36։
[79] Վարդան, 11բ. տեղիքս յառաջ կը բերէ յանուն Աստուածաբանին. «Եւ վայելէր իսկ մեծի լուսոյ արարչութեան ի լուսոյ առնել սկիզբն. զայլոցն զնիւթն յառաջագոյն գոյացուցեալ՝ զտեսակն արար յետոյ. իսկ աստ զտեսակն յառաջ գոյացոյց եւ զնիւթ ամանոյն յետոյ. զի տեսակ արեգականն լոյսն է»։
[80] Բարսեղ, էջ 46. «Ապէ զի՞նչ պիտոյ էին յօդապատ կերպարանք պիտոյից բանին առ այն զորութիւն... որ յօդապատ եւ մարմնապատ բանիւք պատմեցան»։ «Ձայնարան» փոխառութիւն է Նազիանզացիէն. Ան որս է (ՆՀԲ)։
[81] «Անմարմին եւ անարեգակն» փոխառութիւն է Գր· Աստուածաբանի ի Նոր Կիւրակէն ճառէն։

© National Library of Armenia

գեղեցիկ աստղն առաւաւտու, որ մերթ երեկուն եղանէ, գեղեցիկ երեւի եւ մեզ մարմին չափակցեալ անձամբ. ո՞չ նուազ յառնեն մարդիկ ի գործս անօղալ եւ գազանք պատառողք որջանան եւ գողք եւ աւազակք սողանին եւ դէմք թշնամեացն եւ սիրելեացն երեւին: Լուսով ուղղին պէսպէս արուեստք կենցաղոյս. լուսով ընտրին ակունք եւ մարգարիտք ի յաւագոյ եւ ի խճոյ. լուսով ցնծայ ամենայն կենդանի. լուսով տեսանին[82] ամենայն արարածք ի փառս արարչին Աստուծոյ: Կրէ լոյս եւ զայլ այլում լուսաւորիչ գործել, որպէս նախ զաւդ եւ ապա զոսկի եւ զարծաթ եւ զակն եւ զապակի, որ նշոյլ արձակեն յուրմէ ի խնդութիւն տեսանողացն: Եւ եթէ այս արարածական լոյս այսքան բարի եւ գեղեցիկ է, քանի՞ եւս[83] առաւել արարիչն սոյա, որ ասաց. «Ես եմ լոյս աշխարհի[84]», որ զիմանալի աշխարհն եւ զմիտս լուսաւորէ: Անուանեաց եւ զաշակերտսն «լոյս» տիեզերաց[85]. լոյս է եւ պատուիրան նորա ի մէջ եկեղեցւոյ սրբոյ: Եւ որպէս այս խաւար փախչի ի լուսոյ, զգալի եւ իմանալի խաւարն, սատանայ եւ մեղք եւ անգիտութիւն յիմանալի եւ յաստուածային լուսոյն[86]:

22. «Եւ կոչեաց Աստուած զլոյսն տիւ եւ զխաւարն կոչեաց գիշեր»: Որ զգեցաւ զլոյսն եւ յորժամ արեգակն զվերին կիսագունդն անցանէ, զայն կոչեաց, զոր սովոր եմք աւր անուանել, որչափ տեւէ լոյսն յաւդ այդր: Նախ կոչեաց զանուն աւուրն ի պատիւ նմա. ապա երկրորդ զխաւարին, զոր ասացաք աւդ անլոյս եւ ստուեր տեղւոյ: Զգլխաւոր արարածոց անուանս ինքն կոչեաց եւ զմասնաւորն Ադամայ հրամայեաց, հաղորդ կազմելով առնել իւր[87]: Գիշեր, զի գոյն գէշ զգենու[88] աւդ եւ այլք բազումք:

23. «Եւ մեկնեաց Աստուած ի մէջ լուսոյն եւ ի մէջ խաւարին»: Անջրպետեաց ի մէջ երկուցն՝ տունջեան եւ գիշերոյ. զերեկոյն եւ զառաւաւտն. այս է մեկնելն. սահման եւ միջոց, զի զկարգս իւրեանց պահեսցեն եւ պաշտեսցեն զկամս արարչին:

[82] Զ. տեսանի:
[83] Զ. եւ:
[84] Յովհ. Ը. 12:
[85] Մատթ. Ե. 14:
[86] Բարսեղ, էջ 37—38:
[87] Բարսեղ, էջ 39: — Վարդան, 11բ:
[88] «Գիշեր, զի գոյն գէշ զգենու». բառախաղ նկատելու է:
[89] Զ. սպասաւ աստուած:

24. «Եւ ետես Աստուած զի բարի է»: Յառաջ քան զլինելն գիտէր, զի բարի է. այլ ըստ մարդկան մտաց գիջանէ:

25. «Եւ եղեւ երեկոյ». սպառուած[89] աւուրն. «եւ եղեւ վաղորդայն». աւարտ գիշերոյն: Ընդ տիւն եւ ընդ գիշերն աւր մի: Ոչ որպէս Եբրայեցիքն եւ Ասորիք, որ զերեկոյն դնեն սկիզբն աւուրն, այլ ըստ արարչութեան. ի ծագել լուսոյ առաւաւտուն մինչեւ ի նոյն ժամն՝ աւր մի. զի մարթի լուսոյն լինել սկիզբն աւուրն եւ ոչ խաւարն. որպէս ասէր Յոբ. «Յորժամ լինի առաւաւտ, ասիցեմ. Ե՞րբ իցէ երեկոյ. եւ յորժամ երեկոյ՝ ասիցեմ. Ե՞րբ իցէ առաւաւտ[90]»: Զի քսան եւ չորս ժամն կատարեն օր մի: Ոչ ասաց մի աւր եւ մի գիշեր, այլ ի մի պարունակեաց զերկոսս: Եւ այս սովորութիւն պահեցաւ մինչեւ ցայժմ. զաւրն միայն թուել եւ ոչ զգիշերն. ասէ Դաւիթ. «Աւուրք իմ որպէս հովանի անցին[91]». Եւ Յակոբ առաջի Փարաւոնի[92]:

26. Եւ ընդէ՞ր ոչ ասաց առաջին, զի այս ի դէպ էր անկանել այլոցն աւելոյն, թէ աւր երկրորդ եւ երրորդ, այլ ասաց «աւր մի». նախ զայն է ասելի. միոջ բանիս զի մի է բնութիւն աւուրց. զի իւրաքանչիւր աւր զմի եւ զնոյն արեգակն ունի գոյացուցիչ. եւ կամ զի յայտ արասցէ, թէ անցաւոր են ամենայն աւուրն իւրք. որպէս մի աւր պատի գլնքեամբ, թէպէտ եւթն անուանի. այլ [զ]նոյն աւր է որ առնէ զշաբաթն: Եւ այս ցուցանէ, թէ հաստատ ոչ մի ինչ է յայսց իրաց, այլ ամենայն փոփոխականք: Դարձեալ՝ զատ, մեկնեաց զնա յայլ աւուրց. զի նա է վերջին աւր անփոփոխանորդ եւ աներեկ, աւր առաջին զուգակից լուսոյն որ եղեւ ի նմա. աւրն սուրբ միաշաբաթուն, որ է պատուիչ յարութեան Քրիստոսի ի կեանս մարդկան, որ ի նմա յառնեն ամենայն ծնունդք Ադամայ յաւտեանն ահաւոր, եւ առնուն զիւրաքանչիւր զարժանն. զի աւր մեծ է նա մեծի ծագմանն Աստուծոյ: Աւր մի ի միումն աշխարհի. զի որպէս անցաւոր կեանք մարդկան միաբան են ընդ աշխարհս, սոյնգունակ կեանքն հանդերձեալ հաղորդ են անսպառ յաւիտենին: Վասն զի թէ մեք յայլ տեսակ[93] փոխելոց եմք,

[90] Հմմա. Յոբ, է. 4:
[91] Սաղմ. ճԹԳ. 4:
[92] Կ՚ակնարկէ Ծն. ԽԷ. 9. «Աւուրք կենաց իմոց զորս պանդխտեցայ ճԼ ամ է»:
[93] Զ. տեսակի:

յայտէ թէ եւ արարածքս փոփոխելոց են յայլ տեսակ փառաց, զի ունիցի հաղորդութիւն ընդ անեղծ կեանս մեր: Այն աշխարհ մի եւ աւր մի եւ անուն նորա մի[94]:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

[94] Բարսեղ, էջ 39—41, քաղուածաբար: — Վարդան, 12ա—բ:

ՎԱՐԴԱՆ Վ. ԲԱՂԻՇԵՑԻ

ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄԻՐՏՈԼԻ ՎԱՆՔԻՆ

(ԲԱՂԷՇԻ ԴՊՐՈՑԸ. § 25)

Բաղէշի Դպրոցին նշանաւորագոյն ներկայացուցիչն ու անոր վերջին փառքն եղաւ Վարդան Բաղիշեցի, որ էր ծննդեամբ Խութ գիւղաքաղաքէն:

Իր ծնողքն են Եղիա եւ Ղարիպ, եւ եղբայրները՝ Ղարիպջան, Խաչատուր եւ Խոջխապար: Սնած եւ վարժած է Ամիրտոլի վանքին մէջ ի մանկութենէ, առ ոտս Խաչատուր վարդապետի, որ առաջնորդն էր վանքին: «Եւս բազում աշխատութիւն ունի ի վերայ նորա ի գրոց սերտօղուլն (ա՛յսպէս) Բարոնենց Յովհաննէս վարդապետ» (Պօղոս Գաւառցի 1672): Օծուած է կուսակրօն քահանայ Բաղէշի Մեսրոպ եպիսկոպոսի ձեռքով (1650°), իսկ գաւազանի իշխանութիւնը ստացած է Խաչատուր վարդապետէն (Դաւիթ Բաղիշեցի, Դիւան, Ժ., 34): Որովհետեւ նաեւ Դաւիթ Բաղիշեցի (Խնդրակատարէն) ձեռնադրուած էր նոյն Մեսրոպ եպիսկոպոսէն, այս պատճառով կ՚անուանէ զանիկա «հոգեւոր եղբայր մեր Վարդան վարդապետ, ճարտասան եւ բանիբուն» (անդ): Այս երեքը, Մեսրոպ, Դաւիթ եւ Վարդան կը նկատեն իրենք զիրենք «երեք հարազատներ», եղած են յաճախ ի միասին, եւ ապրած միասիրտ եւ միաբան:

Խաչատուր Վ. Բաղիշեցի, որ առաջնորդն էր Ամիրտոլի վանքին, աշակերտն էր Յովհաննէս Բուժիկ Բաղիշեցւոյ. վախճանած է 1662ին եւ թաղուած նոյն վանքին մէջ (Դիւան, Ժ., 54): Կը յիշուի 1654ին «Խաչատուր րաբուն մեծ Բաղիշեցի» (Երուսաղէմ 354): Վարդան երախտագէտ գտնուած է միշտ հանդէպ իր ուսուցչին, կը պարծի անոր աշակերտած ըլլալուն վրայ, «աշակերտ մեծ րաբունւոյն Խաչատուր Բաղիշեցւոյ», կ՚անուանէ զանիկա «ըստ հոգւոյ ծնօղն իմ Խաչատուր անյաղթ պուէտս եւ փիլիսոփոս Հայոց, հայր իմ, որ բազում երկամբք ծնաւ զիս վերստին ի յոյսն իմ կենդանի Քրիստոս» (1659):

Պատմութեան մէջ առաջին անգամ կը յիշուի Վարդան 1651ին. երբ կը նորոգէ Յովհաննէս սարկաւագ Վիեննայի Թ. 571 ձեռագիրը եւ Վարդան ձեռագրին պակասները կը լրացնէ 1651 եւ 1656 տարիներուն. այս առթիւ գրած է Յիշատակարանութիւններս.

1. «Զանծինս բարեաց եւ զծնօղս յոլովակի չարեաց, տիպ ողմասիրի խոզոյ բազմապատկի զՎարդան վարդապետս Բաղիշեցի աղաչեմ յիշել ի Տէր. թվին ՌՃԻ (ապ. ՌՃԻ) գրեցաւ» (թղ. 248ա):

2. «Վերստին նորոգեալ եղեւ սուրբ գիրքս որ է Մեկնիչ Տեսլեան սրբոյն Յովհաննու Աւետարանչի եւ Լուծմունք դժուարիմաց բանիցն Եսայեա հօրն անապատի, ձեռամբ Յովանէս սարկաւագի, ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնօղացն Խանէսին եւ Նղաշին (ապ. Նիազին) եւ հանգուցեալ եղբաւր Խըլաթին, ի դուռն Ամիրդօլու սուրբ Յովանէսին: Այլ եւ յիշել աղաչեմ զեղկելի Վարդանս, որ բազում սատարութիւն ցուցի, զի աշակերտ իմ էր. ...թվին ՌՃԵ (1656) յամին, յորում բազում անցք անցին ընդ մեզ յազգէն Մարաց, զի ռազմ եղեալ ընդ իրեարս՝ զմիմեանս սպանանէին եւ զմեզ յաւարի առնուին...» (թղ. 335ա):

3. «Գրեցաւ սակաւ այս բան թվին ՌՃԺԸ (1669) ձեռամբ Վարդանայ լոկոյ եւ տրպի (ապ. դպրի) վարդապետի Բաղիշեցւոյ...: Յիշատակ է այս Ամիրտօլու սուրբ Յովհաննէսին ի Բաղէշ ի ձեռս մեր» (թղ. 334ա: Վիեննա, Թ. 571, Ցուցակ, էջ 1039): Վարդանի գրչէն են թղ. 247ա—249բ, 333բ—334ա լրացումները: Յովհաննէս կազմած է լոկ եւ կիսով պատռած թուղթերը անգիր թուղթով կարկատած. Ձեռագրին Ա. մասը կը կազմէր (թղ. 1ա—22ա) Եփրեմի Գործք Առաքելոցի Մեկնութիւնը, սկիզբէն պակաս. Վարդան չէ անդրադարձած այս կէտին (հմմտ. թղ. 335ա):

© National Library of Armenia